

Ա Է Ե Տ Ա Բ Ե Բ




«ԹՈՂ ՏՈՒՔ ՄԱՆՔ ՏՂՈՅԸ ՈՐ ԲԵՏԻ ԳԱՆ.» ԳՈՒԿ. ԵԸ. 16.

ՀԱՏՈՐ ԺԷ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՆՈՅՏԵՄԲԵՐ 1, 1888

ԹԻԻ 11



ԽԱՋԱԽԲ

Ո՛վ լսած չէ խաղախներուն և ա. նոնց փոքրիկ ձիերուն սրբնթացու. թեան և գիմացկունութեան վրայ: Ա. ւելի քան երկու դարէ հետէ Ռուսիոյ կայսերք խաղախներէն կ'ընտրեն զին. ուորական մարմին մը, որ թէպէտ ան. կանոն՝ սակայն շատ զօրեղ հեծեալ. ներ են պատերազմի մէջ, և Գաղիա. ցիք բնաւ չեն կրնար մուռնալ թէ իսա.

ԽԱՋԱԽԲ

զախք ինչպէս գրեթէ բնաջինջ ըրին Առաջին Նախիջննի բանակը երբ Մու. կուայի հրկիզութիւնը ստիպեց զնա. ետ քայուիլ ձմրան սաստիկ եղանա. կին մէջ:

Ա.յն խաղախը որ բանակին մէջ չեն. գտնուիր, ըստ մեծի մասին կը զբա. ղին որսորդութեամբ և ձկնորսու. թեամբ, վասն զի քիչ սէր ունին երկ.

րազործութեան և արհեստ բանելու. հանդարտ ուշաատու թեանց: Անոնց սի. ռելի զբօսանքներէն մին է գայլի որսոր. դութիւնը: Արեւմտեան Եւրոպայի մէջ. ուր երկիրներն աւելի բազմամարդ են, գայլ. զրեթէ չգտնուիր: Մեծին Բրի. տանիոյ բուրններուն վրայ թափառող. վերջին գայլը շատ տարիներ առաջ. ինկաւ որսորդին գնտակովը, Գերմա. նիա մրցանակներ տալով գայլի գը.

լուիններ և մորթեր բերողին, գրեթէ բնաշինչ եղած են գայլերն այն երկրէն: Բայց Արևելեան Եւրոպայի աւելի քիչ բնակիչ ունեցող երկիրներուն մէջ, ինչպէս են Թուրքիոյ քանի մը մասերը, գայլերը շատ են. և նախորդ երեսի պատկերը կը ցուցնէ մեզի թէ Խաղախը ինչպէս կ'որսան դաննը: Տոն և Տնեբեր գետոյ սահմաններուն մէջ իրենց բնակութեանց մօտ գտնուած դաշապետայիններուն վրայ կը հարածեն դաննը ձիեր հեծած. և երբ գայլը յոգնելով ետ կը դառնայ պաշտպանել ինքզինք, Խաղախը անոր պարանոցին կը նետէ հանդոյց մը որ կ'իտով չափ կը խեղդէ գազանը: այնուհետև որսորդը կ'ելնէ ձիէն և կը սպաննէ գայլը ծանր բերով մը:



ԿՈՒՐՄԱԾ ԼԱՊՏԵՐԸ

Իմ որդիս, Եղուարդ, անցեալ օր կէս աւուր ճաշի առեն երբ տուն եկաւ հետը բերած էր ուրիշ տղայ մը: Տղաքը քար կը նետէին ասդին անդին, և ահա Եղուարդ դիպուածով կտորեց փողոցի լապտերներէն մին: Եղուարդ արագ արագ տուն վազեց երեսը շատ կարմրած, կարծելով թէ ամէն մարդ իւր վրայ կը նայէր, և թէ ոստիկանութեան պաշտօնեան ետևէն ինկած էր: Իւր մօրն ըսաւ թէ ինչ բրած էր: Երբ տուն եկայ, պատմեցին ինձ, և հարկաւ աշխատեցայ ցուցնել Եղուարդի թէ ինչպէս ծուռ և վտանգաւոր բան է քարեր նետել լապտերներու և տուներու մօտերը, և թէ իրեն ընելիք ամենէն աղէկ բանն էր դպրոցին արձակումէն ետքը երթալ կազի գործարանը և գրագիրին ըսել թէ կտորած էր լապտերը և հարցնել թէ ինչ վճարելու էր լապտերը կտորելուն համար: Հազիւ կրցաւ ճաշն ընել և ամէն տեսակ հարցումներ կ'ընէր վախնարով թէ ոստիկանութեան պաշտօնեան դպրոց պիտի երթար: Խիղճը կը յանդիմանէր զնա և շատ տխրած էր, վասն զի ծուռ գործ մը բրած էր: Կը վախնար օրէնքէն վասն զի կտորած էր զայն:

Երբ երեկոյին տուն դարձաւ դպրոցէն, դնաց կազի գործարանը, ներկայացաւ տեսչին, և պատմեց իւր բրածը, թէ ինչպէս պատահած էր այն, թէ կը ցատէր անոր համար, և կ'ուզէր վճարել լապտերին եղած վնասը: «Հիմա դնա, և վաղն առաւօտ դարձեալ հոս եկուր,» ըսաւ տեսուչը:

Եղուարդ դնաց յաջորդ առաւօտուն, և տեսուչն ըսաւ անոր թէ քանի որ խոստովանած էր իւր բրածը, պիտի ներուէր իրեն: Այս բանը փարատեց Եղուարդի տխրութիւնը և դարձեալ զուարթացաւ անոր երեսը. նա այլ ևս երկիւղ չունէր ոստիկանութեան պաշտօնեայէն:


Բարձր այսպիսի պարագայից մէջ ըսաւ գոյն ճամբան է խոստովանել յանցանքը, ինչ և ըլլայ հետեանքը. այն ատեն խիղճը մաքուր կ'ըլլայ և մարդ կ'ունենայ զուարթ ոգի:

Այս փոքրիկ դէպքը, ինձ կը թուի թէ, կը սորվեցունէ մեծ դաս մը: Դուք մեղանշած էք սուրբ Աստուծոյ մը դէմ. կտորած էք անոր օրէնքները, ինչ է այն:

կէք անոր և ըսէք իրեն ամէն բան. խոստովանեցէք ձեր մեղքերը, և Աստուած պիտի ներէ ձեզի, և դուք պիտի ունենաք խաղաղութիւն և ուրախութիւն:

ԼՈՒՐՄԻ ԱՅՐԸ

Գաղիոյ հարաւային մասին մէջ Պիրենեան լեռանց ստորոտն է Լուրտ գիւղը, որ վերջերս եղաւ հռչակաւոր և հարիւր հազարաւոր այցելուներ իրեն կը քաշէ: Յիշեալ զիւղին վերեւ կը գտնուին աւերակները հին բերդի մը զոր կ'ըստի թէ շինեց Յուլիոս Կեսար. բայց այս չէ այցելուներն հրապուրողը: Ահա հոս կը պատմենք թէ մը դէմ. կտորած էք անոր օրէնքները, ինչ է այն:



ԼՈՒՐՄԻ ԱՅՐԸ

և բրած էք շատ մը գէշ բաներ, և ձեր խիղճը կը դատապարտէ ձեզ: Կը տխրիք, և կը սոսկաք Աստուծոյ ներկայանալէ վասն զի մեզք գործած էք. և իրաւունք ունիք վախնարու թէ պիտի պատժուիք ձեր մեղքերուն համար:

Արդ, ականջ դրէք, ես աւետիս ունիմ ձեզի տարւ: Աստուած որ սիրեց մեղաւորները, թէպէտ կ'ատէ առնց մեղքերը, ձրկապէս «ի միաձին Որդին տուաւ, որ ամէն ով որ անոր հաւատայ՝ չիորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ:» Միջանաք ծածկել կամ պահել ձեր մեղքերը Աստուծմէ այս բանը բնաւ չէք կրնար ընել, վասն զի նա ամէն բան տեսած է և գիտէ. բայց ուղղակի ե-

Յամին 1858, տասնուչորս տարեկան աղջիկ մը, Մարի Սուպիրոն առնուն, պատմեց թէ կոյս Մարիամ անոր երևնալով ըսած էր, «Ես եմ Անարատ Յղութիւնը:» Երբ ժամանակը մինչև այն ատեն անձանթ աղբիւր մը սկսաւ բոխիլ այրէն ուր կոյս Մարիամ երևցած էր, և Մարիի յայտնուեցաւ թէ անոր շուրջ զօրութիւն ունէր բժշկելու կոյրերը և կազերը: Ի սկզբան միայն տղէտ գիւղացիք հաւատացին այս պատմութեան, բայց այն թեմի եպիսկոպոսը հաստատեց թէ ճշմարիտ էր պատմուած տեսիլքը. և այն ժամանակէն հետէ սնապաշտ կաթողիկէք շատ երկիրներէ միւսի և այցելութեան կ'երթան հոն: Հիմա յիշեալ այրին մէջ կանգնուած

է կոյս Մարիամու արձանը, և աղբիւրը յատուկ շէնքի մէջ առնուած է, և հրաշքին հաւատացող ազգաները շիշերով իրենց հետ կը տանին անոր ջրէն:

Յաւալի է տեսնել որ քահանաներէ հնարուած այսպիսի խարէութիւնք կ'անցնին ճշմարիտ ֆրիստոնէութեան տեղ: Եւ սակայն սա է բուն խնդիրը թէ ինչպէս ազատելու է այս տգէտ ժողովուրդները այս մտրութենէն առանց մղելու զանոնք դէպի անհաւատութիւն որ աւելի դէշ մոլորութիւն է:

ՎԵՆԵՏԻԱՆ ԱՊԱԿԻ


Երբ ասկէ քանի մը տարի առաջ վենետիկի զանազան ապակիոյ գոր-

մենէն հուշակաւորն էին, և գարերով անընդհատ պահեցին այն համբաւը: Կը կարծուի թէ ապակիէ առաջին հայտնիները շինուած են վենետիկ: Հայտնի զիւտը անտարակոյս օգնած է յազեցունելու շատ մը անմիտ անձանց անաւարտութիւնը, այնպէս որ շատ ժամանակ կու տան իրենց անձերուն և չքեղ հանդերձներուն վրայ զմայլելու հայելիին առջև: Եւ սակայն այս ուրիշ բան չէ, բայց միայն բանի մը չարաչար գործածութիւնը: Այդ ժամանակէն առաջ հայելիները կը շինուէին յղկեալ և փայլեցուցուած մետաղներէ, որ սակայն յստակ չէին երևցուներ առարկաները: Այժմ գիտէ հիմա թէ ո՛վ էր այն մարդը որ առաջին անգամ ունեցաւ ապակիին վրայ

մուի թէ ժամանակաւ մարդիկ որ կաշառուած էին Գերմանիայէ և Գաղիայէ՝ անոնց յայտնելու համար արհեստին գաղտնիքը, ի ծածուկ սպաննուեցան կառավարութեան պաշտօնէից ձեռքով:

ՄԱՆԿԱՆ ՄԸ ՄԻՋՈՅԱԻ ԱԶԱՏՈՒԱԾ

«Ով որ կ'ուզէ իր անձը ապրեցընել, պիտի կորսնցնէ անիկա և որ իր անձը կը կորսնցնէ, պիտի գտնէ զանիկա:» Ըսաւ մեր Տէրը, յանդիմանելով իւր օրերու սովորական գաղափարները և անձնասիրութենէ յառաջ եկած երկչոտութիւնները: Նա դործածեց այս նորօրինակ ասացուածը որպէս զի խորհել տար իւր աշակերտաց թէ ինչ արժէք ունի կեանքը, և



ՎԵՆԵՏԻԱՆ ԱՊԱԿԻՆԵՐ

ծարաններէն մին կ'այցելէինք, կը նայէինք ճարտար գործաւորաց վրայ մինչ ապակիէ բարակ թել կը քաշէին, կամ մեր հետ գտնուող տղայոց համար այլ և այլ գոյներով ապակիէ գեղեցիկ խաղալիքներ կը շինէին: Գործարանին տէրերէն մին կ'առաջնորդէր մեզ սրահէ սրահ, ցուցնելու համար շինուած այն շատ մը գեղեցիկ բաները, հարկաւ յուսարով թէ քանի մը հատ պիտի գնէինք որպէս զի փոխարինութիւն ըրած ըլլայինք անոր վատնած ժամանակին դէմ: և որ այնպէս ըրինք ալ ուրախութեամբ:

Ապակի շինելը նոր արհեստ չէ վենետիկի մէջ: Ասկէ վեց դարէ աւելի առաջ ապակի կը շինուէր վենետիկ և անոր մօտ գտնուող Մորանոյ կղզին, որ այս մասին աշխարհիս մէջ ա-

նդիկի և անագի խառնուրդ տարածելու բարեգէպ խորհուրդը:

Հոս գրուած պատկերը կը ներկայացունէ վենետիկ շինուած գեղեցիկ բաներուն քանի մը հատին օրինակը, բայց ոչ անոնց զանազան գոյներով: Ասկէ քանի մը հարիւր տարիներ առաջ Գերմանիոյ կայսրերէն մին այցելեց վենետիկ, և լսելու համար անոր ապակիէ սքանչելի աման մը: Կայսրն ըսաւ թէ ապակիին մէկ թերութիւն մը ունէր, և աս էր որ գիւսակուն չէր, և դիւմամբ ձեռքէն վար ձգեց ամանը և կորուց: Լսելու համար անոր հասկցան կայսեր միտքը, և նուիրեցին անոր համակ ոսկի աման մը:

Վենետիկցիք նախանձով գաղտ կը պահէին իրենց արհեստը, և կը պատ-

ինչ արժէք՝ պարտականութիւնը, և չարժէր զանոնք զօհել զիրենք իրենց համոզումներուն:


Այս ասացուածը երևելի օրինակով մը լուսաբանուեցաւ այն միջոցին որ Մըր ճոն Մուտի, Մեզդիացի Զօրավարին, փոքր բանակը ետ կը քաշուէր ձիւներու մէջէ՝ Սպանիական թերակղզոյն հիւսիսային արևմտեան մասին մէջ: Ահագին բազմութիւն մը կը հաւաքուէր Մեզդիացիները որ ըստ օրէցուրտը, անթութիւնը և Գաղիական հեծեալ զօրաց յարձակումները նուազուցած էին անոնց զօրաց թիւը, բայց Մեզդիացիք յառաջ կը քաշէին դէպ ի ծով երկայնամիտ յարատևութեամբ և խաղաղ հաստատամտութեամբ:

Օր մը Մեզդիացի պաշտօնակալ մը ա-

նօթում թե՛ն է և յոգնութե՛ն է տկարացած, անտառ մը մտաւ հոն մեռնելու համար առանց տեսնուելու: Իսկոյն իւր ճամբուն վրայ պատահեցաւ զինուորի մը կինը որ գետինը պառկած էր գրեթէ մեռած: Կինը իւր բազկաց մէջ գըրկած և ցփսփով (շաւ) փաթթած էր իւր մանկիկը: Իւր վերջին շունչը տուած ասե՛ն աղաչեց պաշտօնակալին առնուլ մանկիկը և ազատել անոր կեանքը:

Մօրը աղաչանքը աշխոյժ աղբեց վըհատեալ պաշտօնակալին: Սա ընդունեց այն նոր պարտականութիւնը, և մինչ կ'փոխուէր մանկիկը իւր բազկաց վրայ, նոր զօրութիւն մը եկաւ անոր յոգնած մարմնոյն մէջ: Որոշեց դիմաւ նալ ցուրտին, անօթութեան և յոգնութեան, որպէս զի կարենար հաւատարմութեամբ կատարել մեռնող մօր խնդիրը:

Մանկիկը իւր կռնակը կապեց և գնաց նորէն միացաւ ետ քաջուող բանակին հետ: Մինչ կը քայլէր՝ ամէն օր նուիրեց ինքզինք մանուկին, և մեռնելէ պահուեցաւ զնա ազատելու համար ըրած որոշմամբ զոր ըրաւ հոգ չընելով թէ ինչ պիտի քաշէր այն պատճառաւ: Տարաւ զնա իւր երկայն ճամբորդութեան մէջ, և փափուկ ձեռքով նաւ դրաւ զնա ապահով վիճիոյ ծրոցին մէջ: Մանկիկն աղաթեց պաշտօնակալին կեանքը: Վասն զի նա եղաւ պատճառ որով պաշտօնակալը եկաւ այն դիւցազնական որոշման՝ որ զօրացուց զնա և կարող ըրաւ դիմանալու:



ՌՈՒՍԻՈՑ ԳԱՀԱԺԱՌԱՆԳԻՐ

Երբ Ռուսիոյ կայսրն Աղեքսանդր Բ. սպաննուեցաւ 1881 ին Ոչնչականաց ձեռքով արձակուած պայթուցիկ ռումբով, անոր որդին որ կոչուեցաւ Աղեքսանդր Գ., երեսունութեց տարեկան էր: Նոր կայսեր երէց որդին որ եղաւ Չարեկի կամ Գահաժառանգ, այն ժամանակ տղայ մին էր հաղիւ տասներեք տարեկան: Չարեկիչը որ ծնած է 1868, Մայիս 18 ին, և անունն է Նիկոլայ, հիմա լմնցուցած է իւր քըսաներորդ տարիքը: Ռուսիացիք որ միշտ կը պարծին իրենց իշխանազուններովը, կը նկարագրեն թէ իրենց ապագայ ինքնակալը ինչպէս մարդ մը եղած է:


Նա է, կ'ըսեն, ըստ ամենայնի տարբեր մարդ մը կերպարանքով և իւր շատ յատկութիւններով, բաղդատմամբ բոլոր իւր նախնեաց հետ որ իշխած են ի Ռուսիա: Ծաղկահասակ իշխանին հայրը, Ա.

ղեքսանդր Գ., բարձրահասակ, յաղթամարմին, թաւամօրուս և գրեթէ վայրագ դէմքով մարդ մին է: Անոր հաւն ևս Աղեքսանդր Բ., որ զոհ գնաց Ոչնչականաց ստկալի ոճրին, էր բարձրահասակ, թէպէտ երեսը աւելի քաղցրը և մեղմ երևոյթ ունէր քան Աղեքսանդր Գ. ի երեսը: Նիկոլայ պատանայն հաւուն հայրը, Նիկոլայոս կայսրը, որ մեռաւ խրիմու պատերազմին ժամանակը 1855 ին, բարոյ Երուսալայի մէջ ամենէն բարձրահասակ և ամենէն գեղեցիկ վեսապետն էր: Ծաղկահասակ Նիկոլայ Չարեկիչը բարձրահասակ չէ, բայց շատ սիրուն դէմք ունի. կը նմանի իւր մօր, Տանիմար քայի Մարիա Տակմարի, ընտանիքին: Աչուրներն են շատ պայծառ և թափանցող:

Մօրն ընտանիքը, այսինքն Տանիմար քայի արքայական գերդաստանը, նշանաւոր է ըլլալով մտացի և ի բնէ հանճարեղ ամէն կարգի կենցաղավարութեան մէջ, և կը թուի թէ Չարեկիչը ժառանգած է այս բարեմասնութիւնները: Անոր բնական պայծառ յատկութիւնք բարգաւաճած են երևելի ուսուցիչներէ ընդունած բազմաշխատ կրթութեամբք: Բաց ի Ռուսերէնէ կատարելապէս կը խօսի և կը գրէ Անգլիերէն, Գաղիերէն, Գերմաներէն և Տանիմար քայուց լեզուն:

Չարեկիչը շատ ճամբորդած չէ: Մօտերս իբրև իւր հօր, Ռուսիոյ կայսեր, ներկայացուցիչը՝ գտնուեցաւ Գերմանիոյ Վիլհէլմ կայսեր յուզարկաւորութեան հանդիսին. և այս ի Ռուսիա համարուեցաւ անոր մտնելու սկիզբն աշխարհային դործառնութեանց մէջ:

Եթէ ծաղկահասակ իշխանը յաջորդէ իւր հօր, պիտի ելլէ Ռուսիոյ գահը Նիկոլայոս Բ. անունով: Որովհետև իւր հայրը այժմ քառասունութեք տարեկան է, թերևս շատ ուշ ի գահ պիտի բարձրանայ եթէ այժմու կայսրը խաղաղութեամբ իջնէ գերեզման:




ՄԵՐ ՃԵՔ ԶԵԱՆ ՓՈԹՈՐԿԻ ՄԵՋ

Քանի մը տարի առաջ օր մը Ամբրիկայի մէջ երկրաշարժներու խուճի մը մինչ հազիւ լմնցուցած էր իւր օրական աշխատութիւնը, ահա ելաւ ձեան սաստիկ փոթորիկ: Մարդիկը ճամբայ ելան երթալ իրենց խրճիթը: Հովը շատ սաստիկ կը փչէր, և ձիւնն այնպէս կ'իջնէր որ գրեթէ կ'արգելէր զանոնք իրենց շուրջը տեսնելէ: Երբ կը կարծէին որ գրեթէ մօտեցած էին

իրենց խրճիթին, ամէնքն իսկոյն տեսան իրենց մօտ ոտից հետքեր ձեռանց վրայ: Ասոնց վրայ խնամով նայեցան և գտան յուսահատութեամբ որ առնոնք բուն իրենց ոտից հետքերն էին: Հիմա պարզ հասկցան որ կորսուած էին մեծ դաշտագետնին մէջ, և որ եթէ գիշերը հոն անցունէին ցուրտին և ձիւնին մէջ, իրենցմէ ոչ ոք ողջ պիտի մնար մինչև առաւօտ: Մինչ կը սարսուռային երկիւղէն և ցրտէն, անոնց մեծը նայեցաւ իրենց ձիւրէն մէկու՛ն վրայ, որ էր գորշ գունով նօրոյ մը և կը կոչուէր «Երբ ձէք» և ըսաւ. «Եթէ կայ մէկը որ կրնայ ցուցնել մեր ճամբան դէպ ի խրճիթը այս ձեան մտախտոյղին մէջ, Երբ ձէքն է այն: Հանեմ անոր սանձը բերնէն, արձակեմ զնա, և հետեւիք անոր ուր որ երթայ: Կարծեմ պիտի ցուցնէ մեզի մեր խրճիթին ճամբան:»

Ձին այնինչ ինքզինք ազատ գտաւ, իւր գլուխը վեր բարձրացուց իբր թէ հպարտանալով իւր վրայ դրուած վըստահութեան համար: Այնուհետև հոտոտեց ձեան հովը և բարձրաձայն վրնջեց որով կը թուէր թէ կ'ուզէր ըսել. «Եկէք տղաք, ինձի հետեւեցէք, ես ձեզ պիտի ազատեմ այս դժուարութենէն:» Յետոյ դարձաւ նոր կողմ մը և սկսաւ քայլել, և մարդիկը իրեն կը հետեւէին: Տակաւին մընէն աւելի տեղ չդացած տեսան իրենց խրճիթին կրակներուն ուրախարար բոցերը: Երբ զայս տեսան՝ բարձրաձայն կեցցէնբուր աղաղակներ հանեցին: Ծնորհակալ եղան Աստուծոյ որ ապահով ազատուեցան, և իրենց բազուկներով կը գրկէին Երբ ձէքի պարանոցը, իբրև շնորհակալութեան նշան անոր ըրածին համար:



ՊԱՏԱՍԻԱՆ ՀԱՆՆԵԼՈՒԿԻ

Սեպտեմբեր ամսոյ հանելուկն պատասխանէ «Բեթհեզա» բանայի եղող բառերն են, Բաղակ, Եմբեր, Թարայ, Հազար, Եփրեմ, Չառիկ, Գաւիթ, Աղբիթ, Լուծեցին. Կ. Պոլս. — Յարութեան Կ. Ներկարարեան, Գ. Ս. Գաբրիելեան: Նիկոլայի, — Մեքոպոլ Ս. Գաւիթեան Գաբրիելի, — Մաքրուհի Գ. Եռվանեան, Միքայիլ Ս. Գաբրիելեան, Միհրան Հ. Գերգեան, Յովէլ Մ. Սափրիչեան, Ռուբին Ե. Ալթունեան: Գընձըլուր, — Տիգրան Հ. Գերգեան: Ամսօր, — Ստեփան Մ. Սերովեան: Անի, — Մարգարիտ Մ. Ժամակուհի:

Ամերիկայի Մեխիկոյի Երկրորդական կողմէն,
Արտօնատէր Ջ. Գ. ԿԻՒՆ
Տնօրէն—Խմբագրող Ջ. Ս. ՊԱՐՆԸՄ
Յինճանճըլուր Երկրորդական Իսան:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԴՈՒԴՈՒՍ
N. S. ՊԱՐՆԸՄ և Ս. ԿԱՌԱ ԳՈՅԵՅԱՆ